**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**


✉ Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ
Խնկոյան համայնք, փողոց 1 թիվ 19 շ.
Էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

☎ 093476682


<<25>> ապրիլի 2019թ.

**N 100**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ եմ ներկայացնում Խնկոյան համայնքի ղեկավարի 22.04.2019թ. թիվ 8-Ա, թիվ 9-Ա, թիվ 10-Ա որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, գ. Խնկոյան
հեռ.՝ 093476682

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<22>> ապրիլի 2019 թվականի N 8-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին>> թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ, 17-րդ կետերով, <<Գնումների մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով՝

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի կարիքների համար 2019 թվականին կատարվող գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Ապահովել գնումների պլանի փոփոխությունների հրապարակայնությունը օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հաստատում եմ՝
Խնկոյան համայնքի ղեկավար

_____________ Վ. Համբարձումյան

<<22>> ապրիլի 2019թ.

Կ.Տ.

2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պատվիրատու Խնկոյանի համայնքապետարան | | | | | | |
| (ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման) | | | | | | |
| Ծրագիրը | | | | | | |
| Անվանումը Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | | | | | | |
| բաժին **01** խումբ 1 դաս 1 ծրագիր Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | | | | | | |
| *(ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման)* | | | | | | |
| Գնման առարկայի | | Գնման ձև (ընթացակարգը) | Չափման միավորը | Միավորի գինը | Ընդամենը ծախսերը (դրամ) | Քանակը |
| Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման | անվանումը | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | **ՄԱՍ I. Ապրանքներ** | | | | |
| 30197622 | Թուղթ A4 | ՇՀ | հատ | 1850 | 22200 | 12 |
| 30197231 | ֆայլ | ՇՀ | հատ | 15 | 150 | 10 |
| 39263200 | գրասենյակային գիրք | ՇՀ | հատ | 700 | 3500 | 5 |
| 30197233 | թղթապանակ թղթյա | ՇՀ | հատ | 90 | 450 | 5 |
| 30192121 | գրիչ | ՇՀ | հատ | 100 | 500 | 5 |
| 30192160 | շտրիխ | ՇՀ | հատ | 200 | 400 | 2 |
| 35821400 | ՀՀ դրոշակ | ՇՀ | հատ | 10000 | 20000 | 2 |
| 22900000 | Ելքի-մուտքի օրդեր | ՇՀ | հատ | 500 | 2000 | 4 |
| 35821100 | ՀՀ զինանշան | ՇՀ | հատ | 5400 | 10800 | 2 |
| 39280000 | նվերներ աշակերտներին /գրենական պիտույքներ/ | ՇՀ | հատ | 6000 | 30000 | 5 |
| 22211100 | Լոռու մարզ թերթ | ՇՀ | հատ | 80 | 160000 | 204 |
| 31521300 | փողոցային Էլեկտրական լամպեր | ՇՀ | հատ | 1500 | 22500 | 15 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 34921470 | փողոցային լույս | ՇՀ | հատ | 10000 | 50000 | 5 |
| 31321130 | միջին լարման մալուխներ | ՀՄԱ | մետր | 100 | 20000 | 200 |
| 44161270 | խմելու ջրի խողովակ | ՀՄԱ | մետր | 570 | 57000 | 100 |
| 44163200 | խմելու ջրի խողովակի միացումներ | ՇՀ | հատ | 1250 | 2500 | 2 |
| 31660000 | ածխային էլեկտրոդներ | ՇՀ | հատ | 40 | 4000 | 100 |
| 44163280 | խողովակային ապրանքներ | ՇՀ | հատ | 250 | 500 | 2 |
| 09134200 | դիզելային վառելիք, ամառային | ԲԸՀ | լ | 440 | 239000 | 543 |
| 09411300 | սեղմված գազ | ՄԵ | մ3 | 141.67 | 360000 | 2541 |
| 34221260 | ավտոպահեստամասեր | ՇՀ | հատ | | 150000 | |
| | Ընդամենը | | | | **1155500** | |
| ՄԱՍ III. Ծառայություն | | | | | | |
| 48451100 | <<Վեկտոր Պլյուս>> համակարգչային ծառայություն | ԲԸ | դրամ | 1200 | 14400 | 12 |
| 09311100 | էլեկտրականություն | գմօսը | կՎտ/ժ | 37.48 | 100000 | 2668 |
| | Ընդամենը | | | | **114400** | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի**
**Խնկոյան համայնք, գ. Խնկոյան 1 փ. 19 շ.**
**հեռ.՝ 093476682**
**Էլ. Փոստ Khnkoyan.lori@mta.gov.am**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» ապրիլի 2019 թվականի N 9-Ա

**ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

**որոշում եմ.**

1. Խնկոյան համայնքի տարածքում 2019 թվականի հունիսի 9-ին կայանալիք հերթական ավագանու ընտրության անցկացման համար Լոռու մարզի Խնկոյան համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել <<Խնկոյանի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքը (հասցեն՝ գ. Խնկոյան 1 փողոց, շենք 21):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

2019թ. ապրիլի 22
գ. Խնկոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, գ. Խնկոյան 1 փ. 19 շ.
հեռ.՝ 093476682
էլ. Փոստ Khnkoyan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» ապրիլի 2019 թվականի N 10-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

**որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մարմինների 2019 թվականի հունիսի 9-ին կայանալիք ավագանու հերթական ընտրություններին մասնակցող թեկնածուների նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

| | |
|---|---|
| 1) Կոծինյան Արայիկ Սամվելի | բնակարան՝ հասցեն- գ. Խնկոյան 1 փ. 34 տուն /40քմ/ իր համաձայնության. |
| 2) ԱՁ Մանուկյան Ատոմ | Խանութ՝ հասցեն- գ. Խնկոյան 1 փողոց 17շ. /30քմ/ իր համաձայնությամբ: |

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

2019թ. ապրիլի 22
գ. Խնկոյան